ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏ»-ի

№ 2—3-ի.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ

և

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԳԱՀԻՑ

ՄԱՆԻՖԵՍՏ

(Պաշտօնական)

Ողորմութեամբն Աստուծոյ, Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր Համայն Ռուսիոյ, Ցար Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին։

Գրեթէ երեք տարուց ի վեր մեր հայրենիքը ստրկացնելու ձգտող արտաքին թշնամու դէմ մղուած մեծ կռուի օրերին, Տէր Աստուծուն հաճելի էր նոր ծանր փորձութիւն ուղարկել Ռուսաստանին։ Սկսուած ժողովրդական ներքին խռովութիւնները սպառնում են աղէտաբեր կերպով անդրադառնալ յամառ կռուի շարունակելու վրայ։ Ռուսաստանի վիճակը, մեր հերոսական բանակի պատիւը, մեր թանկագին հայրենիքի ամբողջ ապագան պահանջում է պատերազմն անպայման հասցնել մինչև յաղթական վախճանը։ Անողոք թշնամին լարում է վերջին ոյժերը, և արդէն մօտ է ժամը, երբ մեր քաջարի բանակը մեր փառաւոր դաշնակիցների հետ միասին կարող կը լինի վերջնականապէս ընկճել թշնամուն։

Ռուսաստանի կեանքի այս վճռական օրերին Մենք խղճի գործ համարեցինք թեթևացնել Մեր ժողովրդի սերտ

միությունը և ժողովրդական բոլոր ոյժերի համախմբումը շուտափոյթ յաղթությունն տանելու համար և Պետական Դումայի հետ համաձայն Մենք բարւոք համարեցինք հրաժարւել Ռուսաց Պետութեան Գահից և թառնալ Մեզնից Գերագոյն իշխանությունը։

Չկամենալով բաժանւել Մեր սիրելի Որդուց, Մենք Մեր ժառանգությունը յանձնում ենք Մեր Եղբայր Մեծ Իշխան Միխայել Ալէքսանդրովիչին։ Օրհնում ենք Նրա Ռուսաց Պետութեան Գահը բարձրանալը։ Աւանդում ենք Մեր Եղբօրը վարել պետութեան գործերը լիակատար և անխափան կերպով միացած ժողովրդի ներկայացուցիչների հետ՝ օրէնսդրական հաստատութիւնների մէջ այն հիմունքներով, որ կը սահմանեն Նրանք, այդ բանի համար տալով անդրժելի երդում։

Ցանուն ջերմապէս սիրւուած հայրենիքի՝ կոչ ենք անում հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակներին կատարելու իրենց սրբազան պարտքը Նրա հանդէպ, հնազանդւելով Ցարին համաժողովրդական փորձութիւնների ծանր րոպէին, և օգնելու Նրան ժողովրդի ներկայացուցիչների հետ միասին Ռուսաց Պետութիւնը հանելու յաղթութեան բարօրութեան և փառքի ճանապարհը։ Թող Տէր Աստուածն օգնի Ռուսաստանին։

Իսկականի վրայնորին Կայսրական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրւած է՝

ՆԻԿՈԼԱՅ

2 մարտի, 15 ժամին, 1917 թ.ին, Պսկով քաղաք։

Վաւերացրեց՝ Կայսերական Դրբան մինիստր, գեներալ-ադիւտանտ կոմս Ֆրեդերիկս։

ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Գործադիր կոմիտէտը կազմեց նոր մինիստրութիւն, որոնք են՝

Գէորգիյ Եւգենեիչ Լվով—*Նախագահ Մինիստրների խորհրդի և մինիստր Ներքին գործոց,*

Միլիուկով—*արտաքին գործոց մինիստր,*

Նեկրասով—*ճանապարհների հաղորդակցութեանց մինիստր,*

Կոնովալով—*Առևտրա-արդիւնաբերութեան մինիստր,*

Գուչկով—*Զինուորական մինիստր և ժամանակաւոր ծովային գործոց,*

Շինգարեով—*Երկրագործութեան մինիստր,*

Տերեշչենկո—*Ֆինանսների մինիստր,*

Գոդնեւ—*Պետական կոնտրոլեար,*

Վ. Ն. Լվով—*ուսց-պրոկուրոր Սինոդի*

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Իր այժմեան գործունէութեան ժամանակ կարինէտը պիտի ղեկավարուի հետեւեալ հիմունքներով.

§ 1. *Քաղաքական և կրօնական գործերով դատապարտեալների, ինչպէս և տեղրօրի, ռազմական ապստամբութեան, հոգային յանցանքների և այլ պատճառներով մեղադրուածների կատարեալ ամնիստիա։*

§ 2. *Խօսքի, մամուլի, միութիւնների, ժողովների, գործադուլների ազատութիւն։ Ազատութիւն զինուորականներին՝ ռազմա-քաղաքական հանգամանքների սահմանում։*

§ 3. Վերացուել բոլոր դասակարգային, կրոնական և ազգային սահմանափակումներին։

§ 4. Անմիջապէս նախապատրաստուել Հիմնադիր ժողով գումարելու հանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրութեան սկզբունքներով։ Հիմնադիր ժողովը պիտի որոշի կառավարութեան եղանակն ու Երկրի Սահմանադրութիւնը։

§ 5. Ոստիկանութիւնը փոխարինել ժողովրդական միլիցիայով, որի ընտրովի պետերը պիտի ենթարկուեն տեղական ինքնավարութեան մարմիններին։

§ 6։ Տեղական ինքնավարութիւնների մարմինները պիտի ընտրուեն հանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ։

§ 7. Յեղափոխական շարժման մասնակից զօրքերին պիտի գինաթափ չանել և արտաքսել Պետրոգրադից։

§ 8. Ռազմական խիստ դիսցիպլինի ենթարկուելով հանդերձ շարքի մէջ և ռազմական ծառայութեան ժամանակ, գինուորները ազատուում են բոլոր նախկին սահմանափակումներից և օգտուում, միւս բոլոր քաղաքացիների հաւասարական իրաւունքներով։

Ժամանակաւոր Կառավարութիւնն իր պարտքն է համարում շեշտել, որ նա բոլորովին էլ մտադիր չէ ռազմական հանգամանքները պատրուակելով ձգձգել վերոյիշեալ ռէֆորմների և նպատակների իրագործումը։

Աւագ-մինիստր՝ իշխան Լվով

Մինիստրներ՝ Միլիւկով, Նեկրասով, Կոնովալով, Մանուիլով, Տերեշչենկո, Վլադիմիր Լվով, Շինգարև, Կերենսկի։